Այսու կը տեղեկացնենք մեր յարգոյ հասարակութեան, թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կեդրոնական Վարչութիւնը, իր 21 Յունիսի նիստին մէջ, միաձայնութեամբ Առաջնորդական Տեղապահ նշանակեց Հոգշ. Տ. Գիսակ Վրդ. Մուրատեանը, եւ իր այդ որոշումը հետագրով հաղորդեց Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Տ.Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետին, խնդրելով հաստատումը:

Ստորեւ հրատարակութեան կու տանք մեր՝ 22 Յունիսի, հետագիրը եւ Վեհափառ Հայրապետի՝ 25 Յունիսի պատասխանը:

«Վեհափառ Տէր,

Գրիգորիս Եպիսկոպոսը մեկնեցաւ: Ընոր տնօրինութիւն Տեղապահութիւնը կը վարէ Գիսակ Վրդ.ը: Կը խնդրենք վաւերացումը:

Որդիական Սիրով
Կեդրոնական Վարչութիւն»

«Գոհունակութեամբ ստացանք ձեր հետագիրը: Այսու սիրով կ'ընդառաջենք ձեր դիմումին եւ կը հաստատենք ձեր որոշումը Գիսակ Վարդապետի նշանակման իբրեւ Առաջնորդի Տեղապահ: Մեր օրհնութիւնը Տեղապահ Հայր Սուրբին եւ Պատուարժան Վարչութեանդ:

Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց»

Յաջողութիւն կը մաղթենք Տեղապահ Հայր Սուրբին:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ
Կեդրոնական Վարչութիւն

Ստեփան Զօրեան՝ Մեր Նոր Գրականութեան Դասականը

(Ծննդեան 100-ամեակի Առթիւ)

Դոկտոր Սամուէլ Անթոսեան



Այս օրերուն մեր հայրենիքը նախապատրաստութիւններու մէջ է նշելու համար հայ գրագէտ ու պատմավիպասանՍտեփան Զօրեանի ծննդեան 100-ամեակը:

Տողերուս գրողը շատ անգամ առիթ ունեցած է տեսնելու, ունկնդրելու մեր նոր գրականութեան այս դասականը: Պարթեւահասակ էր, բարեկիրթ, ճաշակով ու կոկիկ հագնուած՝ շրջապատին պատուառանք պարտադրելու աստիճան:

Ստեփան Զօրեան ծնած է 1890-ին Ղարաքիլիսա (ներկայիս՝ Կիրովական): Մեծն Յովհաննէս Թումանեան առիթով մը ըսած է որ բանաստեղծ մը լաւ ճանչնալու համար պէտք է այցելել իր ծննդավայրը: Ասիկա ճիշդ է գրագէտներուն համար ընդհանրապէս:

Գեղեցիկ է Վայոց Ձորը, ներկայիս՝ Կիրովականը: Մանկութեան տարիներուն իր ծննդավայրը շատ մեծ տպաւորութիւն գործած է Ստեփան Զօրեանի վրայ. «Մեծ չի մեր քաղաքը, բայց սիրուն է. մի կողմը անտառ է, միւս կողմը՝ սարեր, ետեւը՝ սարեր, առաջը՝ սարեր ու էդ (այդ) սարերի ու անտառի արանքում (միջեւ)՝ մեր քաղաքը: Երեք կողմից էլ ջրեր են գնում խշշալով: Երբ գիշերը, քաղաքի քնած ժամանակ, դուրս ես գալիս դուռը, ամէն կողմից ջրի խշշոց է լսւում —խը՜շշ, խը՜շշ, խը՜շշ...», -կը գրէ գրագէտը յետագային: Գալով քաղաքի հայ կեանքին, անշուշտ, ոչ մէկ կապ իր անունին հետ. Ղարաքիլիսա— Սեւ եկեղեցի, զոր դրոշմած է թուրքը... Ինչպէս կը վկայէ Ստեփան Զօրեան. «Ղարաքիլիսան այդ տարիներին շնչում էր ազգային աւանդութիւններով ու տօներով, կատարւում էին ծաղիկների (Համբարձման տօն), աննձրեւի (Վարդավառի տօն), բերքի տօները, երիտասարդները երազում էին Աբովեանի Աղասու («Վէրք Հայաստանի» վէպին հերոսը) մասին, նորահարսները օժիտ էին տանում Վարդան Մամիկոնեանի պատկերով ձեռագործեր»:

Ահա այս հայաբոյր միջավայրին մէջ մեծցաւ Ստեփան Զօրեան: Այս ամէնը ան նկարագրեց «Մի կեանքի պատմութիւն» (1935 եւ 1939) ինքնակենսագրական վէպին մէջ համով ու հոտով:

Զարմանալիօրէն, Ստ. Զօրեան ռուսական կրթաթիւն ստացած է: 1906-ին, դպրոցը աւարտելով, գացած է Թիֆլիս թարգմանչական գործ ընելու: Իսկ 1913-էն սկսեալ պաշտօնավարած է համբաւաւոր «Մշակ» պարբերականին խմբագրատունին մէջ:

Արդարօրէն պէտք է խոստովանիլ որ Ստ. Զօրեան արժեւորեց ռուսերէնի իր իմացութիւնը՝ հայերէն թարգմանելով ռուս գրականութեան նշանաւոր երկերը, յատկապէս Լ. Թոլսթոյի «Պատերազմ եւ Խաղաղութիւն» ծաւալուն դիւցազնավէպը:

Ստեփան Զօրեան իր գրական գործունէութիւնը կը սկսի պատմուածքներ գրելով: Իր պատմուածքներուն հերոսները հասարակութեան մոռցուած մարդիկ են, ընկերային կեանքի «յատակի մարդիկը»: Միշտ է, պարկեշտ ու ազնիւ, բայց ստուերային կեանքով ապրող: Պատահական չէ որ 1918-ին հեղինակը այս պատմուածքները լոյս ընծայեց «Տխուր մարդիկ» ընդհանուր վերտառութեամբ: Ժողովածոն շատ լաւ ընդունելութիւն կը գտնէ: «Այս գրքում ես զգում եմ մեր ազգային գրականութեան եւ եւրոպական գրական ձեւերի սինթէզը, որ մինչեւ այժմ մենք չունէինք», -կը գրէ Դերենիկ Տեմիրճեանը:

Այս պատմուածաշարքի մէջ նշանաւոր է յատկապէս «Խնձորի այգին» ստեղծագործութիւնը: Պատմուածքի գլխաւոր հերոսը՝ Մարտին Ապերը ժրաջան հայ մշակի խտացուած կերպար մըն է: Տարիներու տքնաջան աշխատանքով խնձորի այգի մը մէջտեղ բերած է, որուն տիրանալու ագահութիւնը մարդասպանութեան կը մղէ իր հարազատ դուստրը՝ Նուէմը, որպէսզի այգին Մարտին Ապերի երկրորդ կնոջ ժառանգին չմնայ: Կը մահանայ Նուռփարը՝ Մարտին Ապերի երկրորդ կինը, սակայն չի տար յանցագործին անունը, որ չվշտացնէ Մարտին Ապերը: Ոճրագործութիւնը կը բացայայտուի, եւ Մարտին Ապերը կը կացնահարէ իր բոլոր խնձորենիները:

Բոլոր ժամանակներու համար վաւերական պատմութիւն մը, մանաւանդ արծաթասիրութեան մեր ապրած օրերուն: Պատահական չէ որ այսօր, լոյս ընծայումէն 70 տարի յետոյ, այս պատմուածքը բեմականացուեցաւ Հայաստանի մէջ եւ լաւ ընդունելութիւն գտաւ:

Ստ.Զօրեանն ալ իր ժամանակակիցներուն պէս կը ջանայ պատկերել 1920-էն յետոյ «կազմաւորուած» նոր հայ մարդը, սակայն գեղարուեստական արժէք մը չէ կրցած ստեղծել: Տասնամեակներ շարունակ շեփորուող «Գրադարանի աղջիկը» պատմուածքը այլեւս հմայաթափ եղած է...

Ստեփան Զօրեան նշանաւոր դարձաւ հայոց պատմութեան չորրորդ դարու կեանքէն առնուած եռագրութեամբ՝ «Պապ թագաւոր», «Հայոց բերդը» եւ «Վարազդատ»:

Այսօր կարելի է անկեղծօրէն խոստովանիլ որ խորհրդային գրականութեան մէջ չէին խրախուսուեր պատմական նիւթով ստեղծագործութիւնները: Չենք գիտեր թէ ո՞ր գաղափարական գործիչը ահեղ որակում մը տուած էր այդ երեւոյթին. **պատմական նիւթով գրել կը նշանակէ փախուստ տալ իրականութենէն: Ինչ կ'ուզես գրէ, միայն թէ գովէ օրուայ իրականութիւնը: Այլ խօսքով՝ պատուիրուած եւ ծախու գրականութիւն մը...**

Երկրորդ Աշխարհամարտը առիթ հանդիսացաւ որ հեղինակները խիզախութիւն ցուցաբերեն անցեալի պատմութիւնը գեղարուեստօրէն վերարտադրելու: Պատահական չէ որ 1944-ին միաժամանակ լոյս տեսան «Վարդանանք»-ը եւ «Պապ թագաւոր»-ը:

Տպաքանակի մեծ մասը ղրկուեցաւ ռազմաճակատ՝ առաջին գիծի վրայ պատերազմող հայ մարտիկներուն, որպէսզի ոգեւորուին նահնեաց քաջագործութիւններով... Ոգեւորութիւնը մեծ էր: Բայց մեր կորուստն ալ շատ մեծ եղաւ մեր ժողովուրդի փոքր թիւի համեմատ... Քերչի աղաղակը լսելի է մինչեւ այսօր...

(Շար. 1)

Մենք Եւ Մեր Ցոյցերը

17 տարեկան է եւ ըստ ծանօթ բանաձեւումին՝ «ծագումով հայ Ֆրանսուհի»: Մայիս 31-ին ցոյցի գացեր է ու նախ՝ ապշեր, ապա՝ յուզուեր: 400 հոգի տեսեր է (1500 տեսնողներ ալ կան, երեւի մեծ զմեզ խաբելու կամ... Մխիթարելու համար) ու աչքերը արցունքոտեր են: Ցետոյ տխրութիւնը վերածուեր է բարկութեան ու նամակով մը «Ծառաջ»ի, իր վրդովմունքը կ'արտայայտէ եւ հարց կու տայ՝ *«Ինչո՞ւ երթալով աւելի քիչ մարդ կայ ցոյցերուն»* յոյս յայտնելով որ իր նամակը կը հրատարակուի:

Նամակը, առանձին հրատարակելու հարկ չկայ, քանի անոր բովանդակութիւնը, խորքին մէջ, արձագանգն է բոլորին հակազդեցութեանց: Եւ անոնք մեզ կը մղեն –անգամ մը եւս– դառն խորհրդածութեանց:

Թող ոչ ոք գայթակղի եթէ շատ չոր կերպով ըսենք՝ պէտք է վերջ տալ այս ձեւի ցոյցերուն, որոնք ոչ միայն բանի մը չեն ծառայեր եւ անիմաստ են, այլեւ մեզ կը մատնեն խղճալի ու ծիծաղելի վիճակի մը:

Ցոյց մը կ'արդարացուի երբ նպատակի մը կը յանգի եւ ասոնք առաջինն է՝ *արձագանգ մետիաներուն մօտ եւ ոչ թէ* "pour se donner bonne conscience" (*Խիղճը հանդարտեցնելու համար*) ինչպէս կ'ըսեն ֆրանսացիք: Երբ հոն հասած ենք, ուր ոչ իսկ 400–500 հոգի կը ցնցած հաւաքել, ոչ ալ մէկ թերթ իսկ հետաքրքրել, գոնէ այլեւս մեր խեղճուկրակութիւնը չցուցադրենք, խորհիլ չտանք ի վերջոյ դեսպան ատուներուն եւ մետիաներուն՝ «Զգենք այս Հայերն ալ, թող երթան եւ երբեմն ֆանի մը հարիւր հոգիով իրարու էով գան, իրենց ըսածը լրենք լսեն, յուշագիր մը յանձնեն, բիչ մը *տեֆուլէ* կ'ըլլան ու կ'երթան կ'երթան»:

Ձխուսափինք ճշմարտութիւնն ըսելէ: Ոչ մէկ պետութիւն մեզմէ շահ կը տեսնէ: Ոչ մէկ պետութիւն մեզմէ կը վախնայ: Այս իրողութիւններն են Ափրիլէսի մեր կրունկը: Առջի օր, զարմանքով նկատեցաւ ալ խելքը գլուխը մէկէն, սա հարցումը՝ ինչո՞ւ Մոսկուա սիրահարած է Ագերիներու աչքերուն եւ չէ սիրահարուած մեր աչքերուն: Չենք կարծեր որ Մոսկուա –ոչ ալ անշուշտ Ուաշինկթըն– սիրահարութեամբ զբաղին: Տը Կոլ, որ սխալ բաներ ըրած է, բայց ճիշդ բաներ ըսած է, կը կրկնէր թէ՝ Պետութիւնները բարեկամ չունին, միայն շահեր ունին:

Մեր ողբերգութիւնն ալ այն է, որ մեր արդար դատը շահեկան լուծումը կը պահանջենք յանուն մարդկային եւ ժողովրդավարու տարրական իրաւունքներուն:

Պարզ է –եւ արդար– պիտի առարկուի՝ լա՛ւ, ցոյց չընենք, բայց ընենք: Անշուշտ աւելի դիւրին է ըսել թէ ի՞նչ պէտք չէ ընել, քան՝ պէտք է ընել:

Եթէ գիտնայինք...

Բայց, գոնէ՝ փնտռենք:

Արփիկ

«Ծառաջ»
6 Յունիս, 1990

Երեւանի Համալսարանի Տնօրէնին Մամլոյ Ասուլիսը Եւ Ընդունելութիւն

Յունիսի 25-ին եւ 26-ի երկու օրերուն գաղութիս մամլոյ եւ ռադիոհաղորդումներու եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչները հանդիպում ունեցան Հայաստանի Պետական Համալսարանի ռէէքթոր բրոֆ. Սերխիս Համբարձումեանի եւ համալսարանի բաժանմունքների տնօրէններ՝ բրոֆ. Ռափայէլ Մատթէոսեանի եւ Գրիգոր Ղարիպեանի հետ:

Առաջին գիշերը, որ մամլոյ ասուլիսի յատկացուած էր, տեղի ունեցաւ Ուիլքըն Բալաս պանդոկին մէջ, ուր բացման հակիրճ խօսք ունեցաւ Արմենիա Մշակ· Միութեան ներկայացուցիչը՝ պրն. Ռ. Երկանեան, ուր յայտնեց թէ իր Միութեան հրաւէրով Պ. Այրէս ժամանած երեւանի Համալսարանի ռէէքթորն եւ փրոֆեսորները նախապէս պատրաստուած յատուկ ծրագրի համաձայն կոչուած են յարաբերութիւններ հաստատելու Պ. Այրէսի Համալսարանին հետ եւ հաստատել փոխադարձ կապեր իրարու հետ:

Հարցազրոյց ունենալէ առաջ պրն. Սերխիս Համբարձումեան շընորհակալութեան խօսք յայտնեց կազմակերպիչ հաստատութեան ու ներկաներուն եւ ապա մանրամասնեց թէ ինչ օգուտներ կարելի է ստանալ երկու երկիրներու լոյսի կեդրոններու միջեւ հաստատուելիք փոխյարաբերութիւններէն: Այս յարաբերութիւնները, ոչ միայն կարող են ճամբայ հարթել, ըսաւ ան, գիտական, տեխնիկական, փիլիսոփայական եւ այլ մարզերու մշակման համար, այլ նաեւ տնտեսական մայր ըզէ ներս եւս մտնել եւ օգտաշատ դարձնել զանոնք:

Հարցազրոյցը հետաքրքրական եղաւ երբ ներկաները զանազան հարցեր յուզեցին, սկսելով համալսարանային մասնագիտական բռնվանդակութիւն ունեցողներէն, մինչեւ բաղաքականը, որոնց առանցքը կազմեցին Արցախի թնճուկը եւ Հայաստանի ներկայ գոյավիճակը, որոնց մեծայարգ ռէէքթորը պատասխանեց: Անոր խօսքերը որբան գոհացուցիչ նոյնքան զուսպ եղան, առանց ցապաղեցնելու եղած հարցումներուն պատասխանները, ուր կարելի էր նկատել նաեւ դիւանագիտական պատրաստութիւն ունեցող անձը, որուն համար անհրաժեշտին անդրադառնալն է կարեւոր: Արդէն ինք այդ առթիւ յայտնեց թէ երկրին ներկայ յուզեալ վիճակը բնական անդրադարձն է վարչակարգ մը ուրիշ վարչակարգ անցնող երկրի մը համար, եւ պիտի գայ պահը, ուր երկիրը պիտի առանայ իր բնականոն վիճակը:

26-ի գիշերը, որ մեծայարգ հիւրերը լուսջով պատուելու առթիւ Արմենիա Մշակ· տան մէջ պատրաստուած հանդիպում մըն էր, բարի գալստեան եւ տարուող աշխատանքներուն ու ցպատակներուն անդրադարձող ուղերձ ունեցաւ պրն. Շահան Ցովակիմեանը եւ պրն. Սերխիս Համբարձումեանը հրահրեց խօսելու: Արդէն իսկ միջավայրին եւ ցիմբը շրջապատող անձերուն վարժուած մեծայարգ ռէէքթորը, ւ՚տերիմ զրոյցի մը վերածեց իր ունեցած արտայայտութիւնները, ուր անդրադարձաւ միութեան կատելիութեան, Հայրենիք-Սփիւռք կապերուն զօրացման համար կարելին ընել, եւ ի միջի այլոց այդ աշխատանքներուն մասնակցելու հրաւէր ուղղեց երիտասարդ սերունդին, որովհետեւ, ըսաւ ան, մեզ երէկի պիտի վերածուիմք, այսօրը ձերն է: Մեր մեծագոյն սխալը –տարեցներու հոգի է որ, շարունակեց կատակելով, մեզի դեռ երիտասարդ կը համարեմք: Ան, այլեւս անցած համարեց մեր մեզ դեռ երիտասարդ կը համարեմք: Ան, այլեւս անցած համարեց մեր անցեալի մթութեան մէջ ծուարած հայ մարդը, եւ ըսաւ թէ այսօր մեզմէ ամէն մէկը յոյս մը վառելու է իր կարողութեան սահմաններուն մէջ, խաւարը փարատելու համար:

Երեւանի Պետական Համալսարանի Պատուիրակութեան Այցելութիւնը «Մարի Մանուկեան» Հաստատութիւն

Հինգշաբթի, Յունիս 28-ին Մարի Մանուկեան Հաստատութեան հիւրերն էին Երեւանի Պետական Համալսարանի պատուիրակութեան անդամներ պրն. Սերկէյ Համբարձումեան, որ ակադեմական մըն է եւ համալսարանի տնօրէնը, փրոֆեսէօրներ Գրիգոր Ղարիբեան եւ Ռաֆայէլ Մաթեւոսեան:

Հաստատութեան մուտքին հիւրերը դիմաւորեցին եւ բարի գալուստ մաղթեցին պրն. Ցովսէփ Եուսէֆեանը, պրն. Վահրամ Հայրապետեանը, պրն. Ռուբէն Քէչիչեանը եւ Հ.Բ.Ը.Մ. վարչականներ:

Պատուիրակութեան կ՚ընկերանային Արմենիա Մշակութային Կապակերպութեան անդամներ:

Մամուլէն կը տեղեկանանք որ հայ պատուիրակութիւնը ժամանած է Պուէնոս Այրէս՝ տեղի համալսարանին հետ բարեկամութեան եւ համագործակցութեան երկարաժամկէտ պայմանագիր մը ստորագրելու, որ տեղի ունեցաւ նոյն օրը յետ միջօրէի:

Հաստատութեան մէջ ի պատիւ հիւրերու հիւրասիրութիւն եղաւ եւ նախակրթարանի աշակերտներուն կողմէ գործադրուեցաւ փոքրիկ յայտագիր մը (ժամանակի սղութեան պատճառով):

Պատուաւոր հիւրերը ներկայացուց դոկտոր Սամուէլ Անթոսեան՝ նշելով յատկապէս այն ազնիւ ծառայութիւնը, զոր կը մատուցէ մեր ազգին Սերկէյ Համբարձումեան որպէս Խորհրդային Միութեան Գեղարագոյն Խորհրդի Երեսփոխան: Պրն. Ս. Անթոսեան ներկաներուն յիշեցուց այն քայլ եւ համարձակ կեցուածքը, որ հանդէս բերաւ պրն. Ս. Համբարձումեան Արցախի հարցի քննութեան ատեն Մոսկուայի մէջ Կորպաչովի նախագահութեամբ: Բայց դժբախտաբար Խորհրդային Միութեան ղեկավարութիւնը չուզեց ընդունիլ Ս. Համբարձումեանի ճիշդ առաջարկը, այն է՝ Արցախը հանել Ատրպէյճանի պատկանելիութենէն...

Մարի Մանուկեան Հաստատութեան աշակերտները որպէս արտասանութիւն եւ երգ դողտրիկ ծրագիր մը գործադրեցին իրենց երաժշտութեան չնորհալի ուսուցչուհի տիկ· Տիանա Սարաֆեանի ղեկավարութեամբ:

Հիւրերը անկնկալօրէն յուզուած էին ի տես այս հեռաւոր ափերուն հնչող հայ խօսքի, հայ երգի, նաեւ՝ հայ ջերմութեան...

Իր յուզումը հազիւ զսպելով աշակերտութեան դիմեց ակադեմական պրն. Սերկէյ Համբարձումեանը եւ աշակերտութեան համար մատչելի լեզուով մը յորդորեց սիրել մայրենի լեզուն, սիրել մեր սրբազան տաճերը եւ սորվիլ, սորվիլ ու սորվիլ, հարստացնել իրենց գիտելիքները՝ օգտակար ըլլալու համար հայ ազգին:

Պրն. Սերկէյ Համբարձումեան դպրոցին նուիրեց հայրենիքէն բերած յուշանուէրները՝ փոխարէնը ձեռամբ մանուկ աշակերտի մը որպէս նուէր ստանալով Մարի Մանուկեան Հաստատութեան խորհրդանշանով գրչակալ մը:

Երկուշաբթի, Յուլիս 2-ին հիւրերը կը վերադառնան Հայրենիք: Ի սրտէ բարի ճանապարհ կը մաղթենք իրենց եւ յաջողութիւններ իրենց հայրենասիրական առաքելութեան մէջ:

Հ.Բ.Ը.Մ.-ի Նախկին Վարչականներու Ճաշկերոյթը

20 Յունիսի Չորեքշաբթի գիշեր քաղաքիս Հ.Բ.Ը.Միութեան մասնաճիւղին Ս. Պէնկլեան սրահին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ ճաշկերոյթ՝ Միութեան եւ երիտասարդաց Լիկայի նախկին վարչականներու եւ հիմնադիրներու միջեւ, որուն պատահականօրէն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ օրերս քաղաքէս հրաժեշտ տուած Գերշ· Գրիգորիս Եպս· Բունիաթեանը: Ներկայ էին ի մէջի այլոց երկու վեթերան եւ բազմամեայ գործակից բարեգործականցիներ՝ Պրք· Հայկ Էմիրեան ու Գէորգ Քէչիչեանը, Լիկայի հիմնադիրներէն՝ Տօքթ· Նիքօլաս Չերմէս, Հայաստանի դիւանագիտական կազմէն Պր· Վահէմիր Կարմիրզալեան, բանասիրութեան Տօքթ· Պր· Սամուէլ Անթոսեան, Ամերիկահայ ականաւոր երգիչ՝ Պր· Տիգրան Ժամկոչեանն ու իր զաւակը՝ Հրանդ Ժամկոչեանը, Ռահկավար Ազատական Կուսակցութեան Հարաւ Ամերիկայի շրջանի պատուոյատենապետ Պր· Նահապետ Նահապետեանն ու վարչականներ, հին ու նոր ծանօթ ազգայիններ:

Հ.Բ.Ը.Միութեան ներկայ ատենապետ Պր· Վահրամ Հայրապետեանը եղաւ նախ օրուայ սեղանապետը, որով, կարգով խօսք առին Տօքթ· Ս. Անթոսեանը, Պր· Տ· Ժամկոչեանը, որ միեւնոյն ատեն մեներգեց, ապա՝ Պր· Վահէմիր Կարմիրզալեանը, որոնք առհասարակ խօսեցան սփիւռք-հայրենիք յարաբերութիւններու եւ տնտեսական ներդրումներու մասին, նպատակ ունենալով զարկ տալու արտադրական աշխատանքներու եւ գործ հայթայթելու անդործներու: Որպէս վեթերան ընկեր խօսք տրուեցաւ նախ Պր· Գէորգ Քէչիչեանին, որ շնորհակալութեան խօսք յայտնելէ ներկաներուն, յայտնելով թէ Հ.Բ.Ը.Միութեան երեսուն տարուայ կեանքին մէջ տեղի ունեցած յառաջդիմութեանը, բոլոր եկող ու գացող վարչութիւնները իրենց մասնակցութիւնը բերած են անխտիր: Իր հակիրճ ելոյթէն յետոյ ողջագուրեցաւ իր վաղեմի գործընկերի՝ Պր· Հայկ Էմիրեանին հետ:

Ճաշկերոյթի աւարտին՝ Սրբազան Հայրը ներկաները հրաւիրեց աղօթելու, ուր «Հայր Մերը» երգուեցաւ խումբով: Իր փակման խօսքին, Սրբազան Հայրը նոյնպէս անդրադարձաւ հայրենիքին օժանդակելու հարցին, ոչ թէ իբր օգնութիւն այլ հայրենի պետութեան հետ կնքելի տնտեսական համաձայնութեան, ինչպէս նշուեր էին Պրք· Տ· Ժամկոչեանի եւ Վ· Կարմիրզաղեանի կողմէ:

Այս խիստ սրտամօտ ու մտերիմ հանդիպումը վերջ գտաւ կէս գիշերին յաջողութեան եւ յառաջդիմութեան մաղթանքներով:

Վարուժան Աճեմեան

Արմենիա Եւ Ուրարտու

Գրեց՝ *Սահակ Պալըգճեան*

ՈՒՐԱՐՏՈՒՆ ԱՐՄԵՆԻԱ Է

Ակնադրիւրի ջուրին պէս յստակ է որ Հայաստանի հարաւային դրացիները (Ասորեստան, Բաբելոն, եւլն.), որոնց լեզուն սեմական էր, կը գործածէին Ուրարտու բառը: Իսկ այդ աշխարհակալ տէրութիւններու անկումէն ետք, երբ սկսաւ տիրապետող դառնալ յունական հաղաքակրթութիւնը (ապա Հռոմը), տիրապետող լեզուները (յունարէն, լատիներէն, պարսկերէն) որդեգրեցին Արմենիա կոչումը: Այլեւս իսպառ մոռցուեցաւ Հայասա կոչումը, զոր վաղեմի հիբիբները տուեր էին Հայաստանին:

Հիբիբները հնդեւրոպական լեզուն ունէին եւ իրենց ծաղկեալ պետութիւնը տիրող էր կեդրոնական Անատոլիայի մէջ Ք.Ա. մինչեւ 1200 թուականները: Անոնք մեր երկիրը հրազատօրէն կը կոչէին Հայասա:

Մեր օրերուն, շատ պարզ ու բնական կը նկատուի որ միեւնոյն երկրին տարբեր անուններ տրուին տարբեր լեզուներու մէջ: Մէկ ցայտուն օրինակ է հետեւեալը· Գերմանիա պետութիւնը կը կոչուի Տօյչլանտ (գերմաներէն), Ճըրմընի (անգլերէն), Ալըմաճը (ֆրանսերէն) եւլն.: Սակայն տարօրինակ է որ «գիտնականներ» կը զանեն ընդունիլ այդպիսի կացութիւն մը Հայաստանի նկատմամբ, որ՝ ան կոչուի Հայաստան, Արմինա, Արմենիա, Ուրարտու, Արարատ, Հայասա:

Լատիներէն լեզուի որեւէ բառարանի մէջ չէք գտներ Արարատ կամ Ուրարտու: Սակայն, հոն միշտ կերկայ է Արմենիա բառը: Միաժամանակ, Խորենացիի մէջ, գոյութիւն չունի սեմական Արարատ բառը: Ցոյն, լատին, հայ մատենագիրները կը գործածեն Ուրարտու-Արարատի հոմանիշ բառերը որ կան իրենց լեզուներուն մէջ: Ուրարտուի պարագային, Արմենիա, Հայաստան: Այդ մատենագիրները այնքան տգէտ չէին որ կարենային մոռացութեան տալ Ուրարտուն, եթէ իրր Հայաստանէն տարբեր ինքնութիւն մը գոյութիւն ունենար ան:

Թէ Ուրարտու-Արարատ բառը սեմական լեզուի մեծնշանակութիւն էր, այդ յստակօրէն կ'երեւի հետեւեալ իրողութենէն: Ուրարտու անունը առաջին անգամ կ'երեւի ասորեստանեան արձանագրութեան մը մէջ Ք.Ա· 13-րդ դարուն: Եւ այդ անունը հրապարակէն կ'անհետանայ Ք.Ա· 6-րդ դարուն, այսինքն ճիշդ այն ատեն երբ կ'անհետանայ Ասորեստան երկիրը: Պարզ է, չէ՞: Չկայ Ասորեստանը, եւ չկայ այլեւս արձանագրութիւն անոր լեզուով· չկայ Ուրարտու բառը: Բայց կայ տակաւին միեւնոյն Հայաստանը, որ սակայն օտար արձանագրութիւններու մէջ կը կոչուի Արմինա, Արմենիա, որովհետեւ Ասորեստանի փոխարէն հզօր դարձած է Պարսկաստանը, որ իր հնդեւրոպական լեզուով մեզ կը կոչէ Արմէններ, ճիշդ Ասորեստանի անկումէն սկսեալ 9Ք.Ա· 6-րդ դար), Պեհիստունի պարսկական արձանագրութեան մէջ (նոյնպէս Ք.Ա· 6-րդ դար):

Ուրարտագէտները աչքեր ունին, բայց չեն տեսներ: Ըստ իրենց, Ուրարտու երկիրը անհետացաւ Ք.Ա· 6-րդ դարուն, իբր թէ հայերու ներխուժումով (ուրկէ՞): Իսկ պատմագրութիւնը եւ մատենագրութիւնը մեզի ցոյց կու տան թէ Հայաստան-Արմենիա-Ուրարտու չանհետացաւ կամ չձնաւ Ք.Ա· 6-րդ դարուն: Չպատահեցաւ որեւէ ներխուժում: Այլ Ասորեստանի անկումին հետեւանքով, սովորական գործածութենէ դադրեցաւ Ուրարտու բառը, անհետացաւ հիբիբներու անկումին իբր հետեւանք:

Ասորեստանեան նշանագիրներով, սեպագիր արձանագրութիւններուն մէջ, Հայաստանը կոչեր են Ասորեստաներէն բառով՝ Ուրարտու: Այդ կը վերաբերի բառին, անունին: Հայաստան անունին առաջին անգամ կը հանդիպինք Ս.Մեսրոպի գիւտէն ետք, ուրեմն հինգերորդ դարուն: Միթէ՞ այդ կը նշանակէ թէ Հայաստան ծնաւ Ս. Մեսրոպի եւ Վռամշապուհ թագաւորի օրով: Ոչ թէ ծնաւ Հայաստան, այլ գրուիլ սկսաւ այդ բառը: Ինչպէս որ Ք.Ա· 6-րդ դարուն ոչ թէ չմեցաւ Ուրարտու երկիրը, այլ գործածութենէ մեկնուացաւ Ուրարտու բառը:

ԳՐԱԻՈՐ ՓԱՍՏԵՐ

Սակայն գրաւոր (ինչպէս սեպագիր) արձանագրութիւններուն մէջ մնաց Ուրարտու (Արարատ) անունը Հայաստանի մասին, սեմական լեզուներուն մէջ միայն: Ինչպէս ըսինք, սեմական լեզուները միշտ ալ գործածած են Արարատ (Ուրարտու) բառը, բայց երբեք Արմենիա, Հայասա: Հայկական Սովետական Համայնագիտարանին մէջ (12-րդ հատոր, էջ 276, երկրորդ սիւնակ) կը կարդանք թէ հերայերէն լեզուի մէջ (որ նոյնպէս սեմական լեզու մըն է) մեր երկիրը կը կոչուի Ուրարտ կամ Արարտ (կամ Ուրարատ կամ Արարատ):

Սրդ, հին կտակարանը գրուած էր հերայերէն լեզուով եւ հոն Հայաստանը միշտ յիշատակուած է իբրեւ Արարատ (Ուրարտու), նոյնիսկ երբ Արմենիա անունը որդեգրուած էր այլ լեզուներու մէջ: Օրինակի համար, Ք.Ա· հերրորդ դարուն (երբ Հայաստան-Արմենիա կը գտնուէր Արշակունեաց փառքի շրջանին մէջ) երբ Հին Կտակարանի յունարէն թարգմանութիւնը տեղի ունեցաւ, այդ թարգմանութիւնը կատարող հօթանասուներկու հսկայ կրօնապետները յունարէնի մէջ եւս գործածեցին «Արարատի երկիր» բացատրութիւնը, փոխանակ Արմենիայի: Մինչդեռ մի քանի դարեր ետք, նոյն հերրայերէն բնագրէն լատիներէնի թարգմանող մատենագիրները Հին Կտակարանի իրենց թարգմանութեան մէջ գրեցին Արմենիա:

Անցողակի նշենք թէ Հին Կտակարանի վերոյիշեալ յունարէն թարգմանութիւնը (Հօթանասնից) հրահանգուած էր Եգիպտոսի թագաւոր Պտղոմէոս Եղրայրասէրի կողմէ (Ք.Ա· 309-246) որուն մէկ ուրիշ մեծագործութիւնը եղած էր կառուցումը Աղեքսանդրիոյ համալսարանի փարոսին, աշխարհի հօթը հրաշալիքներէն մին նկատուած: Իսկ լատիներէն թարգմանութիւններուն դպիճնպսակը կը կազմէ Ս. Ցերոնիմոսի թարգմանութիւնը, որ ծանօթ է Վուլգատա անունով: Արդ, Ս. Ցերոնիմոս (որ ապրած է 331-420), իր ժամանակաշրջանի ամենէն հմուտ եւ ուսեալ անձն էր: Դասական աղբիւրները գիտէ կը կոչեն իր ժամանակի մեծագոյն պատմաբանը եւ լատիներէն լեզուի ու լատին գրականութեան ամենահմուտ մտաւորականը: Եւ այդ ճեռնհաս թարգմանիչը, Ս. Ցերոնիմոս, որ շատ աւելի ժամանակամօտ էր մեզ շահագրգռող դարին (Ք.Ա· 6-րդ դար), այսինքն Ուրարտուի կործանումի» դարին բան մերօրեայ գիտնականները, իր թարգմանութեան մէջ ուղղակի գրած է Արմենիա ամենուրեք ուր յիշուած է «Արարատի Երկիրը»: Ցերոնիմոս բաջատեղեակ էր հերրայերէնի եւ սեմական այլ լեզուներու, եւ անշուշտ իրր այդպիսին ան բաջ գիտեր, թէ սեմական լեզուներու Արարատ-Ուրարտուն ունէր լատիներէնի մէջ միայն մէկ համապատասխան անուն՝ Արմենիա: Ասիկա, ուրեմն 4-րդ դարուն: Եւ իր թարգմանութիւնը (Վուլգատա) ցայսօր ամենահեղինակաւորն է:

Մեր օրերու բողոքական թարգմանիչները, որ Հին Կտակարանը հերրայերէնէ թարգմանած են հայերէնի, չեն գործածած Հայաստան բառը, այլ պահած են բնագրին յորջորջումը (Արարատ, Ուրարտու): Այսպէս, Գիրք Ծննդոց, գլուխ 8, համար 4.—

«Եւ հօթներորդ ամիսը, ամսուն տասնեւհօթներորդ օրը, տապանը Արարատ լեռներուն վրայ նստաւ»:

Արդ, ուղիղ թարգմանութիւնը պէտք է ըլլար· «Արարատի լեռներուն վրայ նստաւ» որովհետեւ Արարատ բառը հոդ երկրին անունն է:

Մինչդեռ Ցերոնիմոսի լատիներէն (Վուլգատա) թարգմանութեան մէջ կը կարդանք.—

«Եւ հօթներորդ ամիսին, ամիսի բսանեհօթներորդ օրը, տապանը կանգ առաւ Արմենիայի լեռներուն վրայ»:

Նկատել տանք օրերու թիւին տարբերութիւնը: Մին կ'ըսէ տասնեհօթը, միւսը՝ բսանեհօթը:

Անցնինք Հին Կտակարանի մէկ ուրիշ հատուածին: Ջորրորդ Գիրք Թագաւորաց, Գլուխ 19, համար 37: Ասորեստանի թագաւոր Սենեքերիմի սպանութեան մասին, հայերէն աշխարհաբար հրատարակութիւնը կ'ըսէ.—

«Ու երբ անոնք իր աստուծոյն Նեսրաքի տանը մէջ երկրպագութիւն կ'ընէր, անոր որդիները Ադրամելիք ու Սարասար զանիկա սրով զարկին, ու Արարատի երկիրը փախան, եւ անոր տեղ անոր որդին Ասորդան թագաւոր եղաւ»:

(Շար. 2)

203 Մահճակալներ Հայաստանի Հիւանդանոցներուն՝ Գահատայի Հայոց Առաջնորդութեան Նախաձեռնութեամբ

Ուրախութեամբ կը յայտնենք թէ՝ Առաջնորդարանիս կողմէ կատարուած երկար հետապնդումներէ եւ բանակցութիւններէ ետք, ամէն քան 200·000 տոլար արժողութեամբ 203 հիւանդանոցային մահճակալներ եւ այլազան սարքեր ուղարկուեցան Երեւան, խորհրդային «Մարֆլօթ»ի սիրայօժար փոխադրութեամբ:

Այս բարեսիրական եւ հայրենանուէր գործին յաջողութեան պսակուելուն առթիւ չնորհակալութիւն կը յայտնենք Քինկսլէյ ձեներըլ Հիւանդանոցին եւ Օթթաուայի Սիվիք Հիւանդանոցին իրենց մարդասիրական արարքին համար: KMED International այս աշխատանքը համադրելուն Ս.Միութեան Օթթաուայի դեսպանատան՝ այս ապրանքներուն Մոնթրէալէն Օտէսա եւ Երեւան սիրայօժար փոխադրութեան համար, ինչպէս նաեւ Օթթաուայի Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Մխական Խորհուրդին ու Մոնթրէալի ու Թորոնթոյի մէջ ներկայացուցիչներուն, որոնց նախաձեռնութեան ու հետապնդումին կը պարտինք սոյն կարեւոր գործին յաջողութիւնը:

Այս ձեւով, Առաջնորդարանիս կողմէ կատարուած վերջին հանգանակութեամբ, Հայաստանի օգնութեան ընդհանուր գումարը կը հասնի չուրջ 250·000 տոլարի:

Պաքու Կը Վարձատրէ Արցախի Հարցով Իրեն Ծառայող Խորհրդային Դէմքեր

Երեւան, 15 Յուլիս.— Վերջերս Պաքուի մէջ կայացած իր համագումարին ընթացքին, Ատրպէյճանի համայնավար կուսակցութիւնը իր տարներուն, որոնք անցնող շրջանին յայտնեց այն բոլոր պաշտօնական շրջափակումը կազմակերպել, կեդրոնական լրատու միջոցներով խեղաթիւրուած տեղեկութիւնն տալ կամ հակահայ քարոզչութիւնն ընել, եւ նոյնիսկ այն մարդուն՝ Զօր. Սաֆոնովին, որ ահա չորս 7 ամիսներէ ի վեր իր բռնակալ մամուլին տակ առած ամբողջ արցախը, կ'ուզէ հայաթափել զայն եւ ատրպէյճանականացնել:

Բռնապետ զօրավարն արդէն անցեալ շաբաթ արժանացեր էր Ատրպէյճանի խոր երախտագիտութեան՝ չքանչնով եւ պատուագրով նոյնինքն Ատրպէյճանի Կենտկոմի Ա. Քարտուղար Սուլթալիպովի կողմէ: Սակայն այդ վարձատրումը չատ թեթեւ եւ ոչ արժանի նկատելով, վերոյիշեալ համագումարը զինք ընտրեց Ատրպէյճանի պատգամաւոր Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան յաջորդիկայ աշնան գումարուելիք 28–րդ համագումարին: Նմանապէս, նոյն համագումարին պատգամաւոր ընտրուած են, ինչպէս կը գրէ «Կոմունիստ» ռուսերէն թերթը իր այսօրուան թիւով Խ. Միութեան ճանապարհային փոխադրամիջոցներու նախարար Ն. Քոնտրեւը, ԹԱՍՍ Լրատու Գործակալութեան գլխաւոր տնօրէն Լ. Քրաւչենքօն, ինչպէս նաեւ ազգամիջեան հարցերու գծով Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահի օգնականը (անմիջական պատասխանատուն հայ-ազերի ազգամիջեան յարաբերութիւններու): Ջէ մոռցուած նաեւ Լենայինի Ղարաբաղի կազմկոմիտէի նախագահ Փոլեանիչքօն, ինչպէս նաեւ հայացրուած Շուշիի շրջանի Ա. Քարտուղար Ճաֆարովը, ինչպէս նաեւ՝ ուակաւին՝ Լենայինի Ղարաբաղի պետանվտանգութեան (KGB) պետ՝ Վոյկոն:

Արդարեւ, ազերիները պէ'տք է երախտապարտ ըլլան: Վերոյիշեալ ու տակաւին չհնուած պաշտօնատարներու համատեղ ջանքերով, վերջին 1 տարուան ընթացքին Արցախի մէջ ստեղծուած են ազերի 9 գիւղեր, 2 բանուորական աւաններ, իսկ խողլուն դարձած է 60 հազարնոց քաղաք մը, որուն թեկնածութիւնը անշուշտ պիտի գրուի շուտով՝ Ստեփանակերտը փոխարինելու:

Այսուհանդերձ, բնաւ պէտք չէ կարծեն, որ այս երախտագիտութիւնը բոլորին կողմէ կը գնահատուի: Ո'չ, հայերը մինակ չեն որ դժգոհ են անկէ: Նոյն դժգոհութիւնը վերջերս երեւան եկաւ նաեւ նոյնինքն Արցախի մէջ ծառայող խորհրդային բանակի կարգ մը ստորաբաժանումներու, երբ ինքզինք «Շղիթ» (վահան) կոչող զինուորական դաղտնի խմբակ մը թռուցիկներ բաժնեց Զօր. Սաֆոնովի պարբերաբերման դէմ: Ու թէեւ 40 հոգինոց այդ խմբակը հեռացուեցաւ Արցախէն եւ փոխարինուեցաւ ուրիշներով, սակայն դժգոհութիւնը մնաց դժգոհութիւն:

Այդ դժգոհութիւնը մի քանի օր առաջ արտայայտուեցաւ նաեւ Ռուսաստանի Գեր. Խորհուրդի համաժողովին ընթացքին, երբ ռուս զինուորական մը կարդաց 300 բանակայիններու մայրերուն կողմէ ստորագրուած դիմում մը՝ իրենց զաւակները ետ կանչելու Լեռնային Ղարաբաղէն, յայտնելով թէ Արցախ Աֆղանիստան չէ:

Բայց իրո՞ք: Ջէ՞ որ Զօր. Սաֆոնով Աֆղանիստան ծառայած զինուորական է:

Հաղորդագրութիւն

«Հայկական Հարցը Եւ Միջազգային Յարաբերութիւնները»
Աշխատութեան Ներկայացումը

Ուրբաթ, 6 Յուլիսի ժամը 21·00–ին, ազգային առաջնորդարանի դահլիճին մէջ, Հայց. Առաք. Եկեղեցւոյ վարչութեան նախաձեռնութեամբ ընթերցող հանրութեան կը ներկայացուի տոքթ. Փասքուալ Յնինեանի նոր մէկ գործը. «Հայկական Հարցը եւ Միջազգային Յարաբերութիւնները» աշխատութեան 3–րդ հատորը, որ հրատարակուեցաւ՝ տեղւոյս Յանօթ Ագեան տպարանի կողմէ:

Աշխատասիրութեան այս երրորդ հատորը կ'ընդգրկէ Հայկական Հարցի զարգացման հոլովոյթը 1914–1918 ժամանակաշրջանին:

Գործի մասին կը խօսին՝
Արժ.Տէր Արշամ Ա. Քհնյ. Պոզոյեան՝ հայերէն
Լրագրող Ֆերնանտօ Քորտովա
Սիրով կը հրաւիրուի հայ հանրութիւնը:

Բանաստեղծներ Զահրատ Եւ Գրիգոր Պըլտեան Կ'արժանանան Թէքէեան Մշակութային Միութեան «Հայկաշէն Ուզունեան» Գրական Մրցանակին

1989 տարուան հայ գրական գեղարուեստական ու մշակութային երկերու թիւը ըստ մեր ծանօթութեան եւ հետաքրքրութեան եղաւ սահմանափակ:

Հակառակ այս սահմանափակումին սակայն, ծանձնախումբը հաճոյքով կը յայտարարէ որ եղած հրատարակութիւններուն մէջ լոյս տեսան գնահատանքի արժանի գործեր որոնց յատկացուեցան մրցանակներ:

Ստորեւ կը յայտարարենք մրցանակի արժանացած երկերը, անոնց հեղինակները եւ մրցանակները.

1.– «Մէկ Քարով Երկու Գարուն» — Ամ. Տոլար 1·000
Բանաստեղծութիւններ
Զահրատ
Պոլիս

2.– «Կրակէ Շրջանակը Դ. Վարուժանի Շուրջ» — Ամ. Տոլար 1·000
Ուսումնասիրութիւն՝ բանաստեղծական
Հեթանոսութիւնը Դ. Վարուժանի գործերուն մէջ
Գրիգոր Պըլտեան
Փարիզ

Մեր շնորհաւորութիւնները վերոյիշեալ հեղինակներուն եւ մեր մաղթանքը անոնց՝ նոր ու բեղմնաւոր ակնկալութիւններու:

* * *

Թէքէեան Մշակութային Միութիւնը այս առթիւ կ'ուզէ րր ջերմագին շնորհակալութիւնները յայտնել բանաստեղծ եւ գրականագէտ Վահէ Վահեանին որ իսանըերեբէ տարիներ շարունակ նախագահելով Գրական Ծանձնախումբի աշխատանքներուն, բարեխղճութեամբ ու գնահատելի թծախնդրութեամբ հետեւցաւ սփիւռհայ գրական, գեղարուեստական, պատմական, ուսումնասիրական հրատարակուող երկերուն եւ Ծանձնախումբի միւս անդամներուն հետ զուգումները կատարելով որոշեց մրցանակիրները:

Պիտի ուզենք նաեւ յիշել արձակագիր Անդրանիկ Անդրէասեանը որ պայմաններու եւ կարելիութեանց սահմաններուն մէջ, բերաւ իր նպաստն ու թելադրութիւնները Ծանձնախումբի աշխատանքներուն:

Հաւանաբար կատարեալ ու անթերի չեղած առնուած որոշումները կամ տրուած գնահատումները: Երբեմն Ծանձնախումբը ուզեց բաջալերել երիտասարդներ որոնք յուսատու տաղանդ կը յայտնաբերէին, երբեմն գնահատեց արդէն իսկ հեղինակութիւնը պարտադրած երեց գրողներ, երբեմն առիթ չունենալու տեսնելու արժէքաւոր հրատարակութիւններ, բայց միշտ ջանաց ըլլալ անկողմնակալ՝ փնտռելով ու գնահատելով միշտ գեղարուեստական խօսքի վարպետութիւնը հայ գրողին մօտ:

Վահէ Վահեան ու Անդրանիկ Անդրէասեան տարիներով վարած իրենց Ծանձնախումբի ծանրաբեռն աշխատանքը կը փոխանցեն նորերու:

Թէքէեան Մշակութային Միութիւն

* * *

Թէքէեան Մշակութային Միութեան Հայկաշէն Ուզունեան Գրական Մրցանակի նոր Ծանձնախումբը կը խնդրէ հեղինակներէն գիրքերու առաքումը կատարել հետեւեալ հասցէներուն.

1.- H. Ouzounian
49 Rue de Boulainvilliers
75016, PARIS, FRANCE
1 օրինակ

2.- Edmond Y. Azadian
P.O.Box 305
Taylor, MI 48180
U.S.A.
2 օրինակ

Թէքէեան Մշակութային Միութիւն
«Հայկաշէն Ուզունեան»
Գրական Մրցանակի Ծանձնախումբ

viene de pág.2.

Géneral Surkov y las muertes...

- Pero usted condena a nuestros hombres ¿y qué hay acerca de sus hombres?"

"Yo no estuve en Noubarashen durante la lucha, y por lo tanto no conozco qué sucedió allí."

(La entrevista fue interrumpida cuando Ashod Manucharian, miembro del Parlamento de Armenia y del Movimiento Nacional Armenio, telefoneó y preguntó al General Surkov en qué momento los tanques y carros artillados empezarían a moverse dentro de Erevan)

El General respondió: **"Camarada Manucharian, ellos están volviendo desde el suburbio de Kanakere, según mi conocimiento. Pero le aseguro que no apoyaré tales movimientos en la Capital."**

-"Noticias no confirmadas dan cuenta de que habría habido un ataque sobre tropas estacionadas en Noubarashen."

- "El fuego se abrió desde un automóvil que pasó y disparó sobre el edificio donde están instaladas las tropas. Después también se escuchó el tiroteo en otras calles. Los soldados se vieron obligados a responder al fuego. El incidente se produjo en la mañana del 28 de mayo."

Philip Aloyan, corresponsal del diario de Moscú **Komsomolskaya Pravda**, informó el 2 de junio desde Erevan que el General Surkov había anunciado, durante un reportaje, que aún no ha retornado completamente la calma en la capital de Armenia.

De acuerdo con lo informado por el mismo corresponsal, el General Surkov habría dicho que la paz retornará sólo cuando los armenios entreguen sus armas.

"De otra manera -habría agregado- **ello lleva inevitablemente a declarar el estado de emergencia y a confiscar las armas por la fuerza."**

Exhortación a no distorsionar la información

EREVAN. La cobertura informativa de la situación imperante en Armenia y de los recientes hechos ocurridos en Erevan, hecha por los diarios soviéticos, fue motivo de un aleccionador comentario por parte del Secretario del Partido Comunista Armenio, Kaloust Kaloian.

Llamando la atención sobre la gran extensión de estas informaciones y la repercusión que ellas han tenido en la población, Kaloian ha ofrecido algunas pautas que, a su entender, los periodistas soviéticos deberían seguir al informar sobre los hechos en Armenia.

"Informar la verdad y en posición objetiva es deber de todo periodista, sin detenerse ante las dificultades que pudiera encontrar ante el recto desempeño de su tarea", dijo a su audiencia.

Después, analizando una muestra de la reciente información sobre Armenia, Kaloian señaló que **"la información desvirtuada, subjetiva y superficial"**, es un hecho común en la prensa soviética, manifestando que la corriente anti-armenia que prevalece en algunos círculos, es atribuible a esta suerte de información distorsionada.

"Es cierto que hay dificultades en Armenia, como también las hay en otros lugares", dijo Kaloian. **"Y, es lógico que la prensa endilgue a cualquier ciudadano el mote de "terrorista armenio."**

"El punto de vista del periodista no basta para absolverlos de su responsabilidad por cada una de las palabras que publican o difunden".

Y concluyó: **Después de todo, esto es parte de la ética del periodista."**





Isabel Tchalian

ARROLLADO DE TERNERA VAL D'AOSTA

(6 á 8 porciones)

INGREDIENTES:

Un matambre de ternera de 1 kilo y medio - sal y pimienta - 3 atados de espinacas - 1/2 taza de nueces picadas - 1/2 taza de queso fontina rallado - 3 zanahorias hervidas - 3 huevos duros - aceite - 1 vasito de cognac - caldo de carne.

Guarnición: Cebollitas glaceadas - papas "noisettes" fritas.

PREPARACION:

Extender el matambre sobre una superficie, quitarle el exceso de grasa. Salar y pimentar.

Limpiar las espinacas y lavarlas. Sumergirlas durante unos segundos en agua hirviendo, salada; retirarlas y dejarlas escurrir sobre un repasador. Extender las hojas de espinaca sobre la carne sin llegar a los bordes.

Verter un poco de aceite dentro de una cacerola, calentar y dorar la carne en forma pareja dándole vueltas. Bañarla con cognac y con caldo, tapar la cacerola y cocinar primero a fuego vivo y luego disminuir la temperatura, continuando la cocción hasta que el arrollado esté a punto. Ello se comprobará introduciendo la punta de un cuchillo filoso, y si el jugo que sale es de color rosado, retirar la carne.

Servir el matambre caliente, cortado en rebanadas, bañado con la salsa y acompañado con las cebollitas glaceadas y las papas "noisettes" fritas.

Espolvorear con las nueces picadas y el queso rallado. Distribuir las zanahorias hacia lo ancho de la carne intercalando los huevos duros pelados y cortados en casquitos.

Arrollar el matambre y atarlo firmemente con un hilo a lo ancho y luego pasarlo a lo largo.

ACLARACION: En la receta aparecida en nuestra edición anterior, firmada por Meiry Arakelian, de San Pablo, omitimos mencionar que los garbanzos deben agregarse pelados, una vez cocidos.

NÉLIDA BOULGOURDJIAN

La conocida historiadora Nélida Boulgourdjian acaba de regresar de Armenia, donde participó de la Conferencia Internacional que tuvo lugar en Armenia con motivo del 75° aniversario del Genocidio.

Mucho ha de haber sido el aporte que la Profesora Boulgourdjian ha de haber brindado a esta Conferencia -dada su vasta compenetración en el tema-, como los que sin duda habrá podido asimilar dado su espíritu de observación y estudio; como tampoco dudamos de que la Profesora Boulgourdjian habrá traído de la actualidad armenia una visión completa y precisa.

GRAPHIC DESIGNS

Tarjetas - Partes de enlace
Papelería personal

Patricia Tutundjian
Fernanda Akian

AIGAN

CLAY 2992
Tel. 771-3307 / 773-6245

El Libro del doctor Ohanian

El próximo viernes 6 de julio, a las 21 horas se realizará en el Salón del Arzobispado Armenio (Armenia 1369, Capital), la presentación del tercer tomo de la obra *"La Cuestión Armenia y las Relaciones Internacionales"*, del dotor Pascual C. Ohanian, en un acto auspiciado por la Comisión Administrativa de la Iglesia Armenia.

Dicha presentación estará a cargo del R. P. Arsham Bozoyan y del periodista Fernando Córdova.

La entrada será libre y gratuita.

Dr. Arturo Balassanian
Escribano
Registro Notarial 1094
Florida 716 2° Piso — Of. "K"
T.E.: 322—2768

LILIANA M.M. MERDIKIAN
abogada
Ricardo Gutierrez 1357
Pta. Baja "A" — OLIVOS
T.E.: 790—6779 de 14 a 18

BY GUEZZI
Cristalería - Peltre - Regalos
PRECIOS DE FABRICA
•Listas de Casamiento
•Regalos Empresarios
•Gastronomía
Ventas por Mayor y Menor
Juan B. Justo 2760 P.B. "D" Cap.
Tel. 855-0184

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL TEKEYAN
Redacción y Administración
Gorriti 4804
1414 CAPITAL FEDERAL
T.E.: 771—2520
Horario de atención
Lun a Vier de 10.00 a 19.00
Registro Nac. de la Propiedad Intelectual
N° 174428
Director
NAHABET NAHABETIAN
Corresponsalía-Receptoría de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap 84
Cep. 00579—San Pablo
T.E: 813—6731
URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E: 70—3114 Montevideo

viene de pág.2.

Géneral Surkov y las muertes...

- Pero usted condena a nuestros hombres ¿y qué hay acerca de sus hombres?"

"Yo no estuve en Noubarashen durante la lucha, y por lo tanto no conozco qué sucedió allí."

(La entrevista fue interrumpida cuando Ashod Manucharian, miembro del Parlamento de Armenia y del Movimiento Nacional Armenio, telefoneó y preguntó al General Surkov en qué momento los tanques y carros artillados empezarían a moverse dentro de Erevan)

El General respondió: **"Camarada Manucharian, ellos están volviendo desde el suburbio de Kanakere, según mi conocimiento. Pero le aseguro que no apoyaré tales movimientos en la Capital."**

-"Noticias no confirmadas dan cuenta de que habría habido un ataque sobre tropas estacionadas en Noubarashen."

- "El fuego se abrió desde un automóvil que pasó y disparó sobre el edificio donde están instaladas las tropas. Después también se escuchó el tiroteo en otras calles. Los soldados se vieron obligados a responder al fuego. El incidente se produjo en la mañana del 28 de mayo."

Philip Aloyan, corresponsal del diario de Moscú**Komsomolskaya Pravda**, informó el 2 de junio desde Erevan que el General Surkov había anunciado, durante un reportaje, que aún no ha retornado completamente la calma en la capital de Armenia.

De acuerdo con lo informado por el mismo corresponsal, el General Surkov habría dicho que la paz retornará sólo cuando los armenios entreguen sus armas.

"De otra manera -habría agregado- **ello lleva inevitablemente a declarar el estado de emergencia y a confiscar las armas por la fuerza."**

Exhortación a no distorsionar la información

EREVAN. La cobertura informativa de la situación imperante en Armenia y de los recientes hechos ocurridos en Erevan, hecha por los diarios soviéticos, fue motivo de un alec-cionador comentario por parte del Secretario del Partido Comunista Armenio, Kaloust Kaloian.

Llamando la atención sobre la gran extensión de estas informaciones y la repercusión que ellas han tenido en la población, Kaloian ha ofrecido algunas pautas que, a su entender, los periodistas soviéticos deberían seguir al informar sobre los hechos en Armenia.

"Informar la verdad y en posición objetiva es deber de todo periodista, sin detenerse ante las dificultades que pudiera encontrar ante el recto desempeño de su tarea", dijo a su audiencia.

Después, analizando una muestra de la reciente información sobre Armenia, Kaloian señaló que **"la información desvirtuada, subjetiva y superficial"**, es un hecho común en la prensa soviética, manifestando que la corriente anti-armenia que prevalece en algunos círculos, es atribuible a esta suerte de información distorsionada.

"Es cierto que hay dificultades en Armenia, como también las hay en otros lugares", dijo Kaloian. **"Y, es lógico que la prensa endilgue a cualquier ciudadano el mote de "terrorista armenio."**

"El punto de vista del periodista no basta para absolverlos de su responsabilidad por cada una de las palabras que publican o difunden".

Y concluyó: **Después de todo, esto es parte de la ética del periodista."**

GRAPHIC DESIGNS

Tarjetas - Partes de enlace
Papelería personal

Patricia Tutundjian
Fernanda Akian

AGAN

CLAY 2992
Tel. 771-3307 / 773-6245

Dr. Arturo Balassanian
Escribano
Registro Notarial 1094
Florida 716 2° Piso — Of. "K"
T.E.: 322—2768

El Libro del doctor Ohanian

El próximo viernes 6 de julio, a las 21 horas se realizará en el Salón del Arzobispado Armenio (Armenia 1369, Capital), la presentación del tercer tomo de la obra ***"La Cuestión Armenia y las Relaciones Internacionales"***, del dotor Pascual C. Ohanian, en un acto auspiciado por la Comisión Administrativa de la Iglesia Armenia.

Dicha presentación estará a cargo del R. P. Arsham Bozoyan y del periodista Fernando Córdova.

La entrada será libre y gratuita.

COCINA



Isabel Tchaliapin

ARROLLADO DE TERNERA VAL D'AOSTA

(6 á 8 porciones)

INGREDIENTES:

Un matambre de ternera de 1 kilo y medio - sal y pimienta - 3 atados de espinacas - 1/2 taza de nueces picadas - 1/2 taza de queso fontina rallado - 3 zanahorias hervidas - 3 huevos duros - aceite - 1 vasito de cognac - caldo de carne.

Guarnición: Cebollitas glaceadas - papas "noisettes" fritas.

PREPARACION:

Extender el matambre sobre una superficie, quitarle el exceso de grasa. Salar y pimentar.

Limpiar las espinacas y lavarlas. Sumergirlas durante unos segundos en agua hirviendo, salada; retirarlas y dejarlas escurrir sobre un repasador. Extender las hojas de espinaca sobre la carne sin llegar a los bordes.

Verter un poco de aceite dentro de una cacerola, calentar y ne en forma pareja dá Bañarla con cognac y tapar la cacerola y coci fuego vivo y luego dism peratura, continuando la que el arrollado esté a comprobará introduciend un cuchillo filoso, y si sale es de color rosado, ne.

Servir el matambre c en rebanadas, bañado acompañado con glaceadas y las papa fritas.

Espolvorear con las n el queso rallado. zanahorias hacia lo an intercalando los huevo y cortados en casquito

Arrollar el matamb memente con un hilo luego pasarlo a lo larg

ACLARACION: En la receta aparecida en nuestra edición anterior, firmada por Meiry Arakelian, de San Pablo, omitimos men garbanzos deben agr una vez cocidos.

NÉLIDA BOULGOURDJIA

La conocida historiadora Nélida Boulgourdjian acaba de regresar de Armenia, donde participó de la Conferencia Internacional que tuvo lugar en Armenia con motivo del 75° aniversario del Genocidio.

Mucho ha de haber sido el aporte que la Profesora Boulgourdjian ha de haber brindado a esta dada su vasta compe tema-, como los que podido asimilar dado observación y estudio; dudamos de que Boulgourdjian habrá t tualidad armenia una y precisa.

LILIANA M.M. MERDIKIAN
abogada
Ricardo Gutierrez 1357
Pta. Baja "A" — OLIVOS
T.E.: 790—6779 de 14 a 18

BY GUEZZI
Cristalería - Peltre - Regalos
PRECIOS DE FABRICA
•Listas de Casamiento
•Regalos Empresarios
•Gastronomía
Ventas por Mayor y Menor
Juan B. Justo 2760 P.B. "D" Cap.
Tel. 855-0184

Periódico "SARDA de ASOCIACION TEK
Redacción y Gorri 1414 CAPIT T.E.: 7 Horario Lun a Vier d
Registro Propiedad N° Dir
NAHABET Corresponsal avisos y
Sr. Hrair Av. Corrie Cap. 0057 T.E: 81
Dr. Pedro